ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2023թ.

Բովանդակություն

1	2023 ուստարվա հունվար և հուլիս ամիսների շրջանավարտների հարցման	**3**
2	Քոլեջի առարկայական հանձնաժողովների իրականացրած դասալսումների	**7**
3	ԱՊԷՔ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի վերաբերյալ	**9**
4	2023թ.հուլիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցման	**11**
5	2023թ.հուլիս ամսին դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման	**12**
6	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունների	**16**
7	Քոլեջի ստորաբաժանումների իրականացրած աշխատանքների վերաբերյալ	**17**
8	Եզրակացություններ	**20**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ուստարվա հունվար և հուլիս ամիսների շրջանավարտների հարցման

Քոլեջի 2023 ուստարվա շրջանավարտների ընդհանուր թիվը՝ 78, որից 4-ը հեռակա համակարգի շրջանավարտներն են: Շրջանավարտների թիվը ըստ մասնագիտությունների ներկայացված է աղյուսակում.

ԷԼՄ		ԷԳՄ		ԷՀՄ		ՀՀ		ՋՄևՋՍ		ԳՍՀ(հեռակա)	
10		11		20		19		11		4	
ար.	**իգ.**	**ար**	**իգ**	**ար.**	**իգ.**	**ար.**	**իգ**	**ար.**	**իգ.**	**ար.**	**իգ.**
8	2	11	0	14	6	12	7	11	0	3	1

Հարցմանը մասնակցել են ԷԼՄ, ԷՀՄ, ՀՀ և ՋՄևՋՍ խմբերի շրջանավարտները: Ընդհանուր շրջանավարտների թվի 60.2%-ը (47): Իգականը՝ 14, արականը՝ 33:

2023 ուստարվա շրջանավարտների համար նախատեսված հարցաթերթը չի վերանայվել:

Ստորև ներկայացված է շրջանավարտների հարցաթերթը.

1.Խնդրում ենք նշել Ձեր սեռը.

Արական Իգական

2.Տարիքային ո՞ր խմբին եք պատկանում.

18-25 26-30 30 և ավելի

3.Նշեք Ձեր մասնագիտության ձևը.

Հեռակա Առկա Հեռավար

4.Նշեք Ձեր մասնագիտության անվանումը.

- Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում
- Էլեկտրամատակարարում
- Ջերմաէլեկտրակայաններ
- Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ
- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
- Հաշվապահական հաշվառում
- Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավակցում և շահագործում
- Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում

5.Զբաղվածությունը

- Աշխատում եմ մասնագիտությամբ

- Աշխատում եմ ոչ մասնագիտությամբ
- Չեմ աշխատում
- Այլ

6.Տեղեկացվա՞ծ եք ապագա աշխատանքի գործունեության մասին:

Այո Ոչ Դժվարանում եմ պատասխանել

7.Ցանկանու՞մ եք ուսումը շարունակել այլ ուսումնական հաստատություններում: Եթե այո, նշեք ուս.հաստատության անվանումը:_____

8. Բավարարվա՞ծ եք արդյոք...

8.1 Համակարգչային սրահներից և համացանցի մատչելիությունից:

Այո Ոչ Այլ_____

8.2 Մասնագիտացված կաբինետների կահավորանքից:

Այո Ոչ Մասամբ

Եթե ոչ,նշեք պատճառը:_____

9. Գրադարանի առկա գրականությունը որքանո՞վ է նպաստում Ձեր ստացած գիտելիքների ամրապնդմանը:

Լիովին նպաստում է Մասամբ նպաստում է Ընդհանրապես չի նպաստում

10.Լսարանային պայմանները նպաստավոր են ուսանողի ուսումնական գործընթացը ապահովելու համար:

Այո Ոչ Եթե ոչ,նշեք խնդիրը:_____

11.Դասախոսական կազմի կողմից տրված գիտելիքները որքանո՞վ են կիրառելի աշխատանքի մեջ:

Լիովին կիրառելի է Մասամբ կիրառելի է Ընդհանրապես կիրառելի չէ

12.Ուսանողական խորհրդի միջոցով Ձեր հարցերը լուծում գտել են:

Այո Ոչ

Եթե ոչ,նշեք պատճառը_____

13. Երբևէ առաջացած խնդիրների ժամանակ Քոլեջի որ կառույցն է խնդրին լուծում տվել:

- Ուսումնական մաս /Ուս. մասի գծով փոխտնօրեն, դաստիարակչական գծով փոխտնօրեն/
- Առարկայական հանձնաժողովի նախագահներ , կուրսղեկներ, դասախոսներ
- Կարիերայի կենտրոն, որակի կենտրոն

14.Խորհուրդ կտա՞ք այլոց ուսումը շարունակել Քոլեջում:

Այո Ոչ

ՁԵՐ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

(Խնդրում ենք նշել խնդիրները, որոնք ըստ Ձեզ առկա են ուսումնական հաստատությունում, որոնց շտկումը կնպաստի և կբարելավի քոլեջի գործունեությունը):_____

_____

Հարցմանը մասնակցած շրջանավարտների տարիքային խումբը՝ 18-25, քոլեջում սովորել են առկա կրթական համակարգում: Ըստ շրջանավարտների զբաղվածության՝ արդյունքը հետևյալն է, որը ներկայացված է աղյուսակում.

	Զբաղվածություն			
Խումբ	**Աշխատում եմ մասնագիտությամբ**	**Աշխատում եմ ոչ մասնագիտությամբ**	**Չեմ աշխատում**	**Այլ**
ԷԼՄ	-	4	3	1
ՋՄևՋՍ	-	4		1
ԷՀՄ	1	7	3	4
ՀՀ	-	4	11	4

Հարցվածների 89.3% (42) տեղեկացված է իրենց ապագա աշխատանքի գործունեության մասին, իսկ 8.6% (4)-ը՝ տեղեկացված չէ, տվյալ հարցին դժվարացել է պատասխանել շրջանավարտների 2.1% (1)-ը:

Շրջանավարտների 19.1% (9)-ը ուսումը շարունակելու է ՀՊՃՀ -ում, 26% (12)-ը՝ ՀՊՏՀ-ում, 6.3% (3)-ը՝ ԵՊՀ-ում, 4.2% (2)-ը՝ ՀԱԱՀ -ում, 2.1% (1)-ը՝ ՀԱՀh-ում, 2.1% (1)-ը՝ ՃԿՊԱ, 2.1% (1)-ը՝ ՀՌՀ-ում, 4.2% (2)-ը՝ ՀՖԿՍՊԻ -ում, 10.6% (5)-ը՝ դեռ չի ընտրել ուս.հաստատությունը իրենց ուսումը շարունակելու նպատակով, ուսումը չի շարունակելու շրջանավարտների 19.1% (9)-ը, նշված հարցին չի պատասխանել հարցվածների 4.2% (2)-ը:

Այն հարցին, թե որքանո՞վ են շրջանավարտները բավարար համարում քոլեջի համակարգչային սրահները և համացանցի մատչելիությունը, դրական են պատասխանել շրջանավարտների 89.3% (42)-ը, բացասական՝ 10.7% (5)-ը:

Մասնագիտական կաբինետների կահավորանքը լիովին բավարար է համարել հարցվածների 66% (31)-ը, մասամբ բավարար՝ 21.2% (10)-ը, բացասական է պատասխանել՝ 12.8% (6)-ը:

Արդյո՞ք գրադարանի առկա գրականությունը նպաստում է շրջանավարտների ստացած գիտելիքների ամրապնդմանը, այս հարցի պատասխանը հետևյալն է.

- լիովին նպաստում է 42.6% (20)
- մասամբ նպաստում է 29.8% (14)

- ընդհանրապես չի նպաստում 23.4% (11)
- չեն պատասխանել 4.2% (2):

Քոլեջը կարողացել է արդյո՞ք նպաստավոր լսարանային պայմաններ ստեղծել ուսանողի ուսումնական գործընթացը ապահովելու համար հարցին, դրական է պատասխանել շրջանավարտների 87.2% (41)-ը, բացասական՝ 12.8% (6)-ը:

Այն հարցին թե որքանո՞վ է կիրառելի դասախոսական կազմի կողմից տրված գիտելիքը աշխատանքի մեջ, հարցվածների 78.8% (37)-ը պատասխանել է լիովին կիրառելի է, 14.9% (7)-ը՝ մասամբ կիրառելի է, իսկ 6.3% (3) շրջանավարտների համար ընդհանրապես կիրառելի չէ:

Արդյո՞ք ուսանողական խորհուրդը կարողացել է լուծում տալ ուսանողների մոտ առաջացած որևէ հարցի կամ խնդրի: Շրջանավարտների պատասխանը հետևյալն է.

- այո 89.4% (42)-ը,
- ոչ 6.4% (3)-ը,
- մասամբ 2.1% (1)-ը,
- ուսանողական խորհրդին չի դիմել 2.1% (1)-ը:

ՈՒսանողների 34% (16)-ի մոտ երբևէ առաջացած խնդիրներին լուծում է տվել ուսումնական մասը(ուս.մասի և դաստիարակչական գծով փոխտնօրենները), 44.8% (21)-ի՝ կուրսղեկները, դասախոսները և առարկայական հանձնաժողովների նախագահները, իսկ 8.5% (4)-ին՝ կարիերայի և որակի կենտրոնի պատասխանատուները, 8.5% (4)- ի մոտ՝ քոլեջի բոլոր կառույցները, 4.2% (2)-ի մոտ առաջացած խնդիրներին լուծում չի տվել քոլեջի ոչ մի կառույց:

Խորհուրդ կտա՞ք այլոց ուսումը շարունակել Քոլեջում հարցին շրջանավարտների 83% (39)-ը պատասխանել է այո, իսկ 17% (8)-ը՝ ոչ:

Խորհուրդ կտա՞ք այլոց ուսումը շարունակել Քոլեջում:



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քոլեջի առարկայական հանձնաժողովների իրականացրած դասալսումների

Քոլեջում դասալսումներն իրականացվում են ըստ դասալսումների կարգի, նախապես հաստատված գրաֆիկով, յուրաքանչյուր առարկայական հանձնաժողովի (այսուհետ՝ ցիկլ) կողմից: Յուրաքանչյուր ցիկլի նախագահի նախաձեռնությամբ է որոշվում իր ցիկլում իրականացվող տարեկան դասալսումների քանակը: Էներգետիկ ցիկլում ընդգրկված յուրաքանչյուր դասախոսի մոտ իրականացվում է դասալսում՝ կիսամյակը մեկ անգամ:

Որևէ դասախոսի մոտ խնդիրներ առաջանալու դեպքում իրականացվում է ոչ պլանային դասալսում:

Ըստ ներկայացված դասալսումների վերլուծությունների պարզ դարձավ, որ 2021-2022թթ. քոլեջում ընդհանուր առմամբ իրականացվել է 52 դասալսում:

2022-2023թթ. քոլեջում իրականացվել է 45 և ավելի դասալսում: Դասալսումների քանակը կախված է քոլեջում առկա և համալրված մասնագիտությունների, ինչպես նաև դասախոսական անձնակազմի քանակից:

Դասալսումների ընթացքում նշված թերությունները արձանագրվել են տվյալ դասալսումը իրականացնող ցիկլի նախագահի կողմից, այնուհետև քննարկվել է ցիկլի կողմից հրավիրված ժողովներին՝ ցիկլի բոլոր անդամների մասնակցությամբ:

Քոլեջում առկա չորս ցիկլերի իրականացրած դասալսումների ընթացքում նշված թերությունները հետևյալն են՝

- դասախոսների քիչ գնահատումները
- որոշ դասախոսների չափից ավելի խիստ լինելը թե՛ գնահատման, և թե՛ դասապրոցեսի անցկացման առումով
- որոշ դասախոսների մոտ խստության պակասը
- նոր դասախոսների մոտ դասավանդման նյութերի ծավալուն լինելը
- ուսանողների ոչ լիարժեք պատասխանները
- ուսանողների պասիվությունը(խուսափում են ակտիվություն ցուցաբերել)
- դիդակտիկ նյութերի պակասը:

Դասալսումների ընթացքում, բացի վերոնշյալ թերություններից արձանագրվել են նաև մի շարք առավելություններ, դրանք հետևյալ են՝

- գնահատման օբեկտիվությունը
- աշխույժ դասապրոցեսները

- ուսանողների բարձր պատրաստվածությունը և ուսանող-դասախոս ջերմ հարաբերությունները
- նոր նյութի մատուցման ժամանակ ուսանողների ակտիվությունը:

Քոլեջում իրականացվում է նաև փոխադարձ դասալսումներ, որը հնարավորություն է տալիս ծանոթանալու տարբեր դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդներին, տվյալ լսարանի համար ավելի արդյունավետ մեթոդի կիրառման տարածումը ավելի շատ դասախոսների կողմից:

Առաջին կիսամյակում արձանագրված թերությունները ուղղվել են երկրորդ կիսամյակի ընթացքում: Նոր, սկսնակ դասախոսներին աջակցություն է ցուցաբերվել ավելի փորձառու դասախոսների կողմից: Նոր դասախոսների մոտ կատարվել են դասալսումներ, ինչը հնարավորություն է տվել դասալսողներին ծանոթանալ նրանց դասավանդման կարողություններին և մեթոդներին: Նոր դասախոսներին հանձնարարվել է կազմակերպել բաց դաս-միջոցառումներ: Նրանց հետ անցկացվել է խորհրդատվություն, ինչպես դասալսումների կազմակերպման, այնպես էլ միջոցառումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

Ցիկլերի կողմից իրականացված դասալսումների վերաբերյալ կատարված վերլուծությունների արդյունքների ամփոփումից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվող դասալսումները շարունակական բնույթ են կրում, դասալսումների միջոցով բացահայտված խնդիրները պարզաբանվում և շտկվում են քոլեջի համապատասխան օղակների կողմից:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՊԷՔ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի վերաբերյալ

2023թ.հունվար և հուլիս ամիսներին իրականացվել է հարցում՝ ԱՊԷՔ-ի կողմից կազմակերպվող պրակտիկաների վերաբերյալ: 2023 ուստարվա շրջանավարտներին ուղղված հարցաթերթը չի վերանայվել:

ԱՊԷՔ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի վերաբերյալ հարցաթերթը ներկայացված է ստորև.

1. Ո՞ր կազմակերպությունում եք անցկացրել Ձեր պրակտիկան:

_____

(նշել կազմակերպության անվանումը)

2. Կազմակերպության ձևը:

☐ Մասնավոր ☐ Պետական

3. Խնդրում ենք ստորև ներկայացված ձևակերպումները գնահատել 1-5 միավորանոց համակարգով, որից 5-ը բավարարվածության ամենաբարձր աստիճանն է, իսկ 1-ը ամենացածր:

3.1. Պրակտիկայի նպատակը հստակ էր ինձ համար: _____

3.2. Պրակտիկան օգտակար էր տեսական գիտելիքների կատարելագործելու առումով:_____

3.3. Պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների զարգացման առումով: _____

3.4. Պրակտիկան պատշաճ էր կազմակերպված: ____

3.5. Պրակտիկայի տևողությունը բավարար էր առաջադրված նպատակներին հասնելու համար: ____

4. Որքանո՞վ է արդյունավետ եղել ուսումնառության ընթացքում անցկացված պրակտիկան:

☐ 4.1.Շատ արդյունավետ է անցել:

☐ 4.2.Այնքան էլ արդյունավետ չի անցել:_____

(նշել պատճառը)

☐ 4.3.Դժվարանում եմ պատասխանել:

5. Ի՞նչը կցանկանայիք փոխել պրակտիկայի կազմակերպման և անցկացման ձևաչափում:

ՍՏՈՐԵՎ ԿԱՐՈՂ ԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՁԵՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՏՆԵԼ ՁԵՐ ԿԱՐԾԻՔԸ

_____

_____

_____

Հարցմանը մասանկցել են քոլեջի ԷԼՄ, ԷՀՄ, ՀՀ և ՋՄևՋՍ խմբերի շրջանավարտները, 2023 ուստարվա շրջանավարտների 56.4% (44)-ը: Պրակտիկան անց է կացվել պետական և մասնավոր կազմակերպություններում, որից պետականը՝ 70.5% (31), իսկ մասնավորը՝ 29.5% (14): Հարցման նպատակն էր, պարզել ԱՊԷՔ-ի կողմից կազմակերպվող պրակտիկաների ընթացքում առաջացած խնդիրները, շրջանավարտների գոհունակությունը կազմակերպված պրակտիկաներից, ինչպես նաև լուծում տալ պրակտիկայի ընթացքում առաջացած խնդիրներին:

Աղյուսակում ամփոփված են այն հարցերի տվյալները, որոնց գնահատումը իրականացվել է 1-5 բալային համակարգով, որից 5-ը բավարարվածության ամենաբարձր աստիճանն է, իսկ 1-ը ամենացածր:

		5	4	3	2	1	Չեն պատասխանել
1	Պրակտիկայի նպատակը հստակ էր ինձ համար: (Պատ.44)	75% 33	16% 7	2.2% 1	-	-	6.8% 3
2	Պրակտիկան օգտակար էր տեսական գիտելիքների կատարելագործելու առումով: (Պատ.44)	81.9% 36	11.4% 5	2.2% 1	-	-	4.5% 2
3	Պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների զարգացման առումով: (Պատ.44)	79.5% 35	11.4% 5	-	-	-	9.1% 4
4	Պրակտիկան պատշաճ էր կազմակերպված: (Պատ.44)	81.9% 36	13.6% 6	4.5% 2	-	-	-
5	Պրակտիկայի տևողությունը բավարար էր առաջադրված նպատակներին հասնելու համար: (Պատ.44)	59.1% 26	27.3% 12	4.5% 2	-	-	9.1% 4

Որքանո՞վ է արդյունավետ եղել ուսումնառության ընթացքում անցկացված պրակտիկան:



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ.հուլիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցման

Հարցումը իրականացվել է I, II, III և IV կուրսի ուսանողների մասնակցությամբ: Հարցմանը մասնակցել է քոլեջի ուսանողների ընդհանուր թվի՝ 6.6%:

		1-5 բալանոց համակարգ				
		5	4	3	2	1
1	Դասախոսը ներկայացնու՞մ է դաընթացի կառուցվածքը, դասավանդման, ուսումնառության և գնահատման եղանակները:(Պատ.22)	54.6%	31.8%	13.6%	-	-
2	Արդյո՞ք դասախոսը լսարանում կառավարում է ժամանակը և պլանավորում դասընթացը: (Պատ.22)	63.6%	22.8%	-	9%	4.6%
3	Արդյո՞ք նյութը մատուցվում է պարզ, հասկանալի, հետաքրքիր և մատչելի: Օժանդակում է դասընթացի նյութը յուրացնելուն: (Պատ.22)	54.6%	31.8%	13.6%	-	-
4	Դասախոսը կիրառու՞մ է ինտերակտիվ մեթոդներ դասավանդման գործընթացում: (Պատ.22)	63.6%	9%	22.8%	4.6%	-
5	Արդյո՞ք դասախոսը ուսանողներին հնարավորություն է տալիս իրեն դիմել լսարանից դուրս ՝ դասընթացին առնչվող հարցերով: (Պատ.22)	77.2%	4.6%	13.6%	-	4.6%
6	Դասախոսը խրախուսու՞մ է ուսանողների ինքնուրույն աշխատանքը:	68.2%	18.2%	13.6%	-	-
7	Դասախոսը օբեկտիվ է և ուսանողներին գնահատում է սահմանված չափանիշներով: (Պատ.22)	68.2%	27.2%	4.6%	-	-
8	Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում վճարել եք գնահատականի (ստուգարքի) համար: (Պատ.22)	Այո			Ոչ	
		-			100%	
9	Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել մասնավոր հիմունքներով պարապել՝գնահատականի (ստուգարքի) համար: (Պատ.22)	Այո			Ոչ	
		13.6%			86.4%	
10	Լսարանում դասախոսը կարգապահությունը պահու՞մ է պատշաճ մակարդակի վրա: (Պատ.22)	45.5%	31.8%	22.7%	-	-
11	Դասախոսը բարիացակա՞մ է և հարգալից ուսանողների հանդեպ: (Պատ.22)	68.2%	22.8%	9%	-	-
12	Կցանկանայի՞ք մասնակցել տվյալ դասախոսի կողմից դասավանդվող մեկ այլ դասընթացի: (Պատ.22)	Այո			Ոչ	
		77.3%			22.7%	

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ.հուլիս ամսին դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման

Քոլեջի կրթության որակի պատասխանատուի կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացվում է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանում: Հարցումը իրականացվում է հարցաթերթի միջոցով՝ առկա, թղթային տարբերակով: 2023թ.դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման հարցաթերթը վերանայվել է կրթության որակի պատասխանատուի և որակի աշխատանքային թիմի կողմից: Հարցաթերթի վերանայման նպատակն է, շտկել նախորդ տարվա հարցաթերթում եղած թերությունները, փոխարինել այն հարցերը, որոնք շտկվել են ընթացիկ ուստարում:

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը թվով՝ 41, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 9.7% (4)-ը քոլեջում աշխատում է համատեղությամբ: Հարցմանը մասնակցել է քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 82.9%(34)-ը, չի մասնակցել 17.1%(7)-ը:

Քոլեջի վարչական, ուսումնաօժանդակ կազմը համատեղությամբ աշխատում է, որպես դասախոս «Հանրակրթական», «Էներգետիկական», «Տնտեսաիրավագիտական» և «Բնագիտական առարկաների և ինֆորմատիկայի» ցիկլերում, որը կազմում է դասախոսական կազմի 36.6% (15)-ը:

Հարցմանը մասնակցել է իգական սեռի 28 դասախոս, արական՝ 6:

Ուսումնական հաստատության աշխատանքային գործունեությանը լիովին իրազեկված է եղել հարցվածների 97.1%(33)-ը, մասամբ՝ 2.9%(1)-ը:

Հարցվածների 100% (34)-ը միշտ մասնակցել է քոլեջում իրականացվող քննարկումներին (մանկ.խորհ.), միջոցառումներին, կարևոր որոշումներ կայացնելիս, խնդիրների պարզաբանմանը:

Այն հարցին թե վերջին 2 տարվա ընթացքում քանի՞ անգամ են մասնակցել ՄԿԾ -ի մշակման, գնահատման և վերանայման գործընթացին, քոլեջի դասախոսական կազմի պատասխանը հետևյալն է.

- մեկ անգամ մասնակցել է 18% (6)-ը
- երկու և ավելի անգամ մասնակցել է 41% (14)-ը,
- երբեք չի մասնակցել 41% (14)-ը:

ՄԿԾ -ի մշակման, գնահատման և վերանայման գործընթաց	Քոլեջի կողմից կամ ցիկլի որևէ դասախոսի նախաձեռնությամբ իրականցրած գործընթաց	Մկուզակի կողմից իրականացրած ՄԿԾ-ի մշակման, գնահատման և վերանայման գործընթաց	Մկուզակի կողմից իրականացրած ՄԿԾ-ի մշակման, գնահատման և վերանայման գործընթաց / Քոլեջի կողմից կամ ցիկլի որևէ դասախոսի նախաձեռնությամբ իրականցրած գործընթաց
Մեկ անգամ մասնակցած 18% (6)	3	3	-
Երկու և ավելի անգամ մասնակցած 41% (14)	8	3	3
Երբեք չմասնակցած 41% (14)	-	-	-

Մեկ անգամ մասնակցած 6 դասախոսներից 3 -ը մասանկցել է քոլեջի կողմից կամ ցիկլի որևէ դասախոսի նախաձեռնությամբ իրականցրած ՄԿԾ-ի մշակման, և վերանայման գործընթացին, 3-ը՝ մկուզակի կողմից իրականացրած ՄԿԾ-ի մշակման, գնահատման և վերանայման գործընթացին:

ՄԿԾ-ի մշակման, և վերանայման գործընթացին երկու և ավելի անգամ մասնակցած 14 դասախոսներից 8-ը մասնակցել է քոլեջի կողմից կամ ցիկլի որևէ դասախոսի նախաձեռնությամբ իրականացրած գործընթացին, 3-ը՝ և՛ ցիկլի, և՛ մկուզակի կողմից իրականացրած գործընթացին, 3-ը՝ միայն մկուզակի կողմից իրականացրած գործընթացին:

Իրականացրե՞լ եք որևէ հետազոտություն ՄԿԾ -ի մշակման ընթացքում:

	Այո	**Ոչ**
Մեկ անգամ մասնակցած 18% (6)	2 (33.3%)	4 (66.7%)
Երկու և ավելի անգամ մասնակցած 41% (14)	13 (92.9%)	1 (7.1%)
Երբեք չմասնակցած 41% (14)	1 (7.1%)	13 (92.9%)

Մեկ անգամ մասնակցածների 33.3% (2)-ը իրականացրել է հետազոտություն, 66.7%(4)-ը՝ չի իրականացրել: Երկու և ավելի անգամ մասնակցածների 14-ից՝ 92.9%(13)-ը իրականացրել է, իսկ 7.1%(1)-ը ՄԿԾ -ի մշակման ընթացքում չի իրականացրել որևէ հետազոտություն: Երբեք չմասնակցած 14 դասախոսներից 92.9%(13)-ը չի իրականացրել հետազոտություն, իսկ 7.1%(1)-ը իրականացրել է հետազոտություն, բայց ՄԿԾ -ի մշակմանը չի մասնակցել:

Արդյո՞ք քոլեջում իրականացվող քննարկումներին (մանկ.խորհ.), միջոցառումներին, կարևոր որոշումներ կայացնելիս, խնդիրների պարզաբանմանը հաշվի են առնվում դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի առաջարկված տարբերակները հարցին՝ 23.5% (8)-ի առաջարկած տարբերակները միշտ հաշվի են

առնվում, 55.9% (19)-ը՝ երբեմն են հաշվի առնվում, 8.8% (3)-ը դժվարացել է պատասխանել, տվյալ հարցին չի պատասխանել 11.8% (4)-ը:

Մասնագիտական գործունեության ժամանակ դասախոսական անձնակազմը առնչվել է հետևյալ խնդիրների հետ.

- մասնագիտական գրականության պակաս
- ուսանողների բացակայություններ
- դիդակտիկ նյութերի սակավություն
- ուսանողների անհարգելի ուշացումներ:

Դասախոսական կազմի 24% (8)-ը առնչվել է վերոնշյալ բոլոր խնդիրների հետ, 26.4% (9)-ը որպես խնդիր նշել է ուսանողների բացակայությունները, 8.8% (3)-ը՝ ուսանողների անհարգելի ուշացումները, 8.8%(3)-ը՝ մասնագիտական գրականության պակասը, 5.8% (2)-ը՝ ուսանողների բացակայությունները և դիդակտիկ նյութերի սակավությունը, 5.8% (2)-ը առնչվել է և՛ ուսանողների բացակայությունների և՛ անհարգելի ուշացումների հետ, 2.9% (1)-ը՝ մասնագիտական գործունեության ժամանակ առաջացած խնդիր է համարում դիդակտիկ նյութերի սակավությունը, 2.9% (1)-ը՝ դիդակտիկ նյութերի սակավությունը և ուսանողների անհարգելի ուշացումները, 2.9% (1)-ը որպես խնդիր նշել է ուսանողների բացակայությունները, դիդակտիկ նյութերի սակավությունը և ուսանողների անհարգելի ուշացումները, 8.8% (3)-ը՝ մասնագիտական գրականության պակասը և ուսանողների անհարգելի ուշացումները, 2.9% (1)-ը չի պատասխանել նշված հարցին:

Քոլեջի հայալեզու մասնագիտական և ժամանակակից գրականությունից լիովին բավարարված է դասախոսական անձնակազմի 29.4% (10)-ը, մասամբ՝ 67.7% (23)-ը, քոլեջի հայալեզու մասնագիտական և ժամանակակից գրականությունից բավարարված չէ 2.9% (1)-ը:

Որքանո՞վ եք բավարարված:	**1-10 բալանոց համակարգ**										**Չեն պատասխանել**
	1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	
Մասնագիտական կաբինետների կահավորանքից	1 2.9 %	-	3 8.8 %	1 2.9 %	8 23.5 %	10 29.4 %	5 14.8 %	5 14.8 %	1 2.9 %	-	
Համակարգչային կաբինետներից, համացանցի մատչելիությունից	-	-	-	1 2.9 %	3 8.8 %	3 8.8 %	13 38.2 %	7 20.5 %	3 8.8 %	-	4 12 %
Լսարանային պայմաններից	1 2.9%	1 2.9 %	1 2.9 %	2 5.8 %	7 21 %	3 8.8 %	12 35.2 %	2 5.8 %	2 5.8 %	-	3 8.8 %

Հարցմանը մասնակցած քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 50% (17)-ը ունի մասնագիտական վերապատրաստման կարիք, մասնագիտական վերապատրաստման կարիք չունի 32.4% (11)-ը, դժվարացել է պատասխանել 17.6% (6)-ը:

Այն հարցին թե վերջին 2 տարվա ընթացքում քանի՞ անգամ են մասնագիտական վերապատրաստման մասնակցել, դասախոսական կազմի 67.8% (23)-ը չի մասնակցել ո՛չ ներքին, ո՛չ արտաքին վերապատրաստումներին:

23.5% (8)-ը՝ մասնակցել է միայն արտաքին վերապատրաստումներին, 2.9% (1)-ը՝ ներքին վերապատրաստման, 5.8% (2)-ը՝ առնվազն 2 անգամ մասնակցել է և՛ արտաքին, և՛ ներքին վերապատրաստումներին:

Ինչպե՞ս եք վերաբերվում ներքին վերապատրաստումներին հարցին, հարցվածների 94.1% -ը համարում է դրական, 5.9% -ը չի պատասխանել հարցին:

Քոլեջում ուսումնառության ընթացքում առաջացած խնդիրների լուծման համար դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 85.3% (29)-ը միշտ տարբերակներ է առաջարկել, 14.7% (5)-ի կողմից երբեք տարբերակներ չի առաջարկվել խնդիրների լուծման համար:

Առաջարկված տարբերակները եղել են հիմանականում կարգապահության խստացման վերաբերյալ, առաջարկվել է համապատասխան միջոցառումներ ձեռնարկել անհարգելի ուշացումների թիվը կրճատելու համար, եղել են առաջարկներ գնահատման թերթիկների վերանյաման, գնահատման ձևի փոփոխության, թեմատիկ պլանների փոփոխության և շտկման վերաբերյալ:

Ըստ հարցաթերթի վերլուծության դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 62% (21)-ը քոլեջի վարած քաղաքականությունից և գործող ընթացակարգերից լիովին բավարարված է, իսկ 38% (13)-ը բավարարված է մասամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունների

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի Կառավարման խորհուրդը վերակազմավորվել է 2022թ.-ին: Առաջին նիստը՝ նոր կազմավորված կառավարման խորհրդի անդամների մասնակցությամբ տեղի է ունեցել 22.07.2022թ-ին: Օրակարգում՝ որպես ռազմավարական խնդիր ներկայացվել է նոր բացված «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում» և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությունների մեկ ուսանողի ուսման վճարի չափի սահմանումը: Ըստ արձանագրության մեկ ուանողի համար վարձավճարի չափը սահամանվել է հաշվի առնելով տարածաշրջանային գործոնը, բնակչության սոցիալտնտեսական, ֆինանսական վիճակը:

Կառավարման խորհրդի հաջորդ նիստը կայացել է 15.09.2022թ.-ին պահպանելով եռամսյա նիստերի հրավիրման ժամանակացույցը: Խորհրդի նիստում քննարկվել է փոխատեղման հարցը | կիսամյակում:Կրթաթոշակ ստացողների կազմը, զեկուցվեց ըստ համակարգերի միջև մասնագիտական, նախնական մասնագիտական և հեռակա ուսուցման կրթական ծրագրերի տարիֆային ցուցակները:

15.12.2022թ.-ին տեղի է ունեցել կառավարման խորհրդի հաջորդ նիստը, օրակարգային հարցերից է եղել տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի կազմակերպում և անցկացում:

Ըստ կառավարման խորհրդի արձանագրությունների հաջորդ նիստը հրավիրվել է 23.01.2023թ.-ին, նիստում քննարկվել է 2023թ.-ի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հարցեր և ըստ մանկավարժական աշխատանքային ստաժի միջին մասնագիտական կրթական ծրագրով դասախոսական 1 դրույք հաստիքի վարձատրության չափը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված սկզբնաժամկետը եղել է 11.01.2023թ., իսկ ավարտը՝ 31.01.203թ.:Այդ ժամանակահատվածում տնօրենի թափուր պաշտոնի համար՝ որպես հավակնորդ դիմել է միայն Գագիկ Սիմոնի Մեհրաբյանը, վերջինս սահմանված ժամկետում ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փատաթղթերը, իր կողմից մշակված ուս.հաստատության զարգացման ծրագիրը:

09.02.2023թ.-ին հրավիրվել է կառավարման խորհրդի նիստ: Պահպանելով քոլեջի տնօրենի համար նախատեսված քննության անցկացման բոլոր կետերը՝ քվեարկության արդյունքում կառավարման խորհրդի անդամների 10 կողմ, 0 դեմ ձայն հարաբերակցությամբ Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի տնօրեն ընտրվեց Գագիկ Սիմոնի Մեհրաբյանը:

Մրցույթի ամբողջ ընթացքը ձայնագրված է:

09.02.2023թ.-ին քոլեջի տնօրենի ընտրությունից հետո, մեկ այլ արձանագրությամբ կառավարման խորհրդի նիստում քննարկվել են այլ հարցեր:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քոլեջի ստորաբաժանումների իրականացրած աշխատանքների վերաբերյալ

1.Ուսումնական մասի կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ուսամնական մասի կողմից վերանյվել է դասալսումների կարգը: 2021-2023թթ.ԱՊԷՔ -ի «Հանրակրթական առարկայական հանձնաժողով»-ի կողմից քննարկվել և փոխվել է «Ճարտագիտական հոգեբանություն» առարկայի ծրագիրը:

Մկուզակի կողմից 2022թ.-ին վերանայվել է «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության, «Հաշվապահ» որակավորման պետական կրթական չափորոշիչը: Հաշվի առնելով վերոնշված փոփոխությունները՝ 2023թ.-ի ուստարվա ‖ կիսամյակում, ուսումնական մասի կողմից մշակվել է «Տնտեսաիրավագիտական ցիկլ»-ի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսումնական պլանը և մոդուլային ծրագրերը: Վերանայված ուս.պլանով և ծրագրերով դասավանդումը կտարածվի 2022թ.ընդունված ուսանողների վրա՝ 2023-2024 ուս.տարում:

Ուսումնական մասի կողմից իրականցվել է քոլեջի սովորողների առաջադիմության վերլուծություն 2021-2022թթ. և 2022-2023թթ. : Ըստ վերլուծության 2021-2022թթ. շրջանավարտների թիվը ՝ 58, ԷՀՄ, ԷԳՄ, ԷԼՄ, ՋՄևՋՍ և ՀՀ մասնագիտությունների գծով, իսկ 2022-2023թթ. նույն մասնագիտությունների գծով շրջանավարտների թիվը՝ 73: Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցության թույլ տվություն ստացել են 78 սովորող, բայց փաստացի ավարտել են 73 սովորող՝ 69 առկա և 4 հեռակա ուսուցմամբ: 2021-2022թթ շրջանավարտների որակական առաջադիմությունը եղել է 20.3/37.2, որը ցույց է տալիս գերազանց և հարվածային ավարտած շրջանավարտների տոկոսային հարաբերակցությունը:

2022-2023թթ. շրջանավարտների որակական առաջադիմության ցուցանիշը եղել է 28.7/28.7 տոկոսային հարաբերակցությամբ:

2021-2022թթ. հուլիս ամսվա դրությամբ ունեցել ենք 15 խումբ (250 ուսանող), որից ՄՄԿ համակարգում՝ 215, ՆՄԿ համակարգում՝ 12, հեռակա համակարգում 3 ուսանող : Ընդհանուր որակական առաջադիմությունը գերազանց և հարվածային սովորողների կազմել է 11.74/36.52 տոկոսային հարաբերակցությամբ:

2022-2023թթ. հուլիս ամսվա դրությամբ խմբերի թիվը՝ 17, իսկ սովորողների՝ 253: ՄՄԿ համակարգում՝ 231, իսկ ՆՄԿ համակարգում՝ 22: Ընդհանուր որակական աաջադիմությունը՝ 6.7/41.1 տոկոսային հարաբերակցությամբ :

Վերլուծելով 2021-2022թթ. և 2022-2023թթ. սովորողների որակական առաջադիմության ցուցանիշները, պարզ դարձավ, որ որքանով նվազում է գերազանցության ցուցանիշը, այնքանով բարձրանում է հարվածային սովորող ուսանողների քանակը:

2023թ. II կիսամյակի ընթացքում մշակված փաստաթղթերի վերաբերյալ.

- ✓ «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և կարգը(բարելավման ծրագրի չափ.6, 6.1) :
- ✓ «Աբովյանի պետական էներգետիկակա քոլեջ» ՊՈԱԿ -ի արտաքին կապերի քաղաքականությունը(բարելավման ծրագրի չափ.9, 9.1):
- ✓ «Աբովյանի պետական էներգետիկակա քոլեջ» ՊՈԱԿ -ի քոլեջում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ կանոնակարգը (կրթության որակի պատասխանատու):

2022-2023 ուստարում ԱՊԷՔ-ի ձեռքբերած նոր գործընկերների վերաբերյալ:

Նոր պայմանագրեր են կնքվել ‹‹Երևան քաղլույս›› ՍՊԸ և Աբովյանի ‹‹Արև Էներջի›› ՍՊԸ կազմակերպությունների հետ:

Էներգետիկական ցիկլի մասնագիտությամբ սովորող ԷԼՄ, ԷԳՄ խմբերի ուսանողները, իրենց պրակտիկաները այսօր հնարավորություն ունեն անցկացնելու ոչ միայն ‹‹Հայէլցանց››, ‹‹ Էներգաչափ››, Աբովյանի ‹‹Գեղամա›› մասնաճյուղում այլ նաև ‹‹Երևան քաղլույս›› կազմակերպությունում, իսկ ‹‹Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում›› մասնագիտությամբ սովորող ուսանողները հնարավորություն ունեն իրենց ուսումնաարտադրական պրակտիկաներն անցկացնեն ոչ միայն ‹‹Մուլտի Սոլար›› ՍՊԸ կազմակերպությունում, այլ նաև ‹‹Արև Էներջի›› ՍՊԸ կազմակերպությունում:

Նոր ձեռք բերված գործընկերների շնորհիվ մեծանում է նաև քոլեջի ճանաչելիության մակարդակը:

Նոր ռազմավարական ծրագրում նշված աշխատանքների վերաբերյալ:

Քոլեջը հստակեցրել է իր արտաքին շահակիցների շրջանակը, ընդլայնել է էներգետիկ և էներգետիկային հարող ոլորտների և մասնագիտությունների շրջանակը:

Նոր ռազմավարական ծրագրում քոլեջի հիմնախնդիրների լուծման ժամկետները հստակեցվել են՝ բաժանելով կարճաժամկետի, միջնաժամկետի և երկարաժամկետի:

Նոր ռազմավարական ծրագրում նշված հիմնախնդիրներից, 2023թ.-ին ուստարվա II կիսամյակում կատարվել են՝

- ➢ քոլեջի շենքային հարմարեցումը սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար (կարճաժամկետ),
- ➢ քոլեջի տարածքի ոռոգման համակարգի հիմնանորոգում (կարճաժամկետ),
- ➢ քոլեջի հարակից տարածքի կանաչապատում (միջնաժամկետ),
- ➢ կարճաժամկետ դասընթացների և վերապատրաստումների կազմակերպում (երկարաժամկետ):

2.Գրադարանի 2023թ.-ին ուս.տարվա II կիսամյակում իրականացրած աշխատանքերի վերաբերյալ:

Վերլուծությունից պարզ դարձավ, որ 2022 թվականին ընթերցողների թվաքանակը 2021 թվականի համեմատությամբ աճել է 10%-ով, ինչը պայմանավորված է ուսանողների թվաքանակի աճով:

Դասախոսական անձնակազմից գրադարանից օգտվող կանաց թիվը նույնպես աճել է 10%-ով:

Գրքերը ուսանողներին տրամադրվում են գրադարանային գրքաշրջանառության սկզբունքով՝ անվճար:

22.04.022թ. Մկուզակից ստացված գրքերի թիվը կազմում է 29: Գրադարանում տեղի է ունեցել էներգետիկ ցիկլի դասախոսների ժողով - քննարկում, որտեղ էներգետիկ ցիկլի նախագահ Լ.Քամալյանը ներկայացրել է իր իր կողմից գրված ուսումնական ձեռնարկը՝ ‹‹Քաղաքային բաշխող էլեկտրական ցանցեր››:

15.12.2021թ. քոլեջին նվիրաբերել են 198 գիրք՝ գեղարվեստական գրականություն:

Գրադարանի ընթերցասրահում տարվա ընթացքում կազմակերպվում են տարատեսակ միջոցառումներ: 2022թ. միջոցառումների թիվը կազմել է 13, որը 2021թ. համեմատությամբ աճել է 20% -ով:

2022-2023 ուստարվա II կիսամյակում կազմակերպված միջոցառումների վերաբերյալ:

1.‹‹Մեր վերքերը դեռ բաց են››

2.‹‹Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի››

3.‹‹Արամայիս Սահակյան-87››

4.‹‹Բանաստեղծ ծնված Մակու քաղաքում›› Եղիշե Չարենցին նվիրված միջոցառում:

Առաջին միջոցառումն նվիրված էր Մեծ Եղեռնի 108-րդ տարելիցին: Այն կազմակերպվել էր հայոց լեզվի և գրականության դասախոսի նախաձեռնությամբ: Միջոցառմանը մասնակցում էր ուսխորհուրդը և քոլեջի ակտիվ ուսանողները:

Երկրորդ, երրորդ և չորրորդ միջոցառումները կազմակերպվել են հանրակրթական առարկայական հանձնաժողովի դասախոսների նախաձեռնությամբ: Մջոցառումներին մասնակցում էր քոլեջի տարբեր խմբերի ուսանողներ:

Կազմակերպված միջոցառումների նպատակն էր.

1.Ուսանողների մեջ վառ պահել հայի անկոտրում ոգին և կամքը:

2.Ճանաչել և իմանալ մեր բազմադարյան պատմությունը և մշակույթը:

3.Ճանաչել հայի տեսակը, որը միշտ էլ մեռնելով է ապրել, իսկ այժմ պետք է ապրի հաղթելով:

4. Ճանաչել մեր մեծերին, նրանց ստեղծած գրական ժառանգությունը:

5.Սերմանել մեծ սեր դեպի հարազատ մշակույթը:

Հանրակրթական առարկայական հանձնաժողովի կողմից ակտիվ կերպով, շարունակաբար իրականացվում են միջոցառումներ առողջ ապրելակերպի վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտների հարցաթերթի վերլուծությունից արված եզրակացությունը հետևյալն է. քոլեջում կարիերայի կենտրոնի գրագետ խորհրդատվության և ուսանողների հետ շարունակական աշխատանքի շնորհիվ շրջանավարտների 89,3%-ը տեղեկացված է իրենց աշխատանքային գործունեության մասին: Շրջանավարտների 63.8%-ը արդեն իսկ աշխատում է, չնայած ոչ մասնագիտությամբ: Բարձրագույն ուս.հաստատություններում ուսումը շարունակելու է՝ 66%-ը: Քոլեջը նպաստավոր պայմաններ է ստեղծել սովորողների ուսումնական գործընթացը ապահովելու համար: Դասախոսական կազմի կողմից տրված գիտելիքները կիրառելի են աշխատանքի մեջ: Ուսանողական խորհուրդի միջոցով բարձրացվում են ուսանողներին հուզող հարցերը, լուծում ստանալու նպատակով: Ուսանողները մեծ վստահություն ունեն կուրսղեկների նկատմամբ: 44,8% շրջանավարտների մոտ քոլեջոում ուսման ընթացքում երբևէ առաջացած խնդիրներին լուծում տրվել է կուրսղեկների և առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից: Քոլեջը կարող է բարձրացնել իր ճանաչելիության մակարդակը շրջանավարտների միջոցով, քանզի շրջանավարտների 83%-ի պատասխանը քոլեջի վերաբերյալ եղել է դրական և կարող են մյուսներին խորհուրդ տալ իրենց ուսումը շարունակել ԱՊԷՔ-ում:

Քոլեջի կողմից կազմակերպված պրակտիկաները պատշաճ է կազմակերպված, շրջանավարտները բարձր են գնահատում պրակտիկայի կարևորությունը տեսական գիտելիքների կատարելագործելու և գործնական կարողությունների զարգացման առումով, իսկ պրակտիկաների տևողությունը բավարար են համարել իրենց առաջադրված նպատակներին հասնելու համար:

Քոլեջում ուսանողների կողմից օնլայն եղանակով իրականցվել է դասավանդման որակի և արդյունավետության գնահատում, հարցմանը մասնակցել է սովորողների 6,6%-ը: Սովորողների ցածր ներգրավվածությունը տվյալ հարցմանը, հնարավորություն չի տալիս տեսնել քոլեջում իրականացվող դասավանդման որակի և արդյունավետության ընդհանուր պատկերը:

Քոլեջում դասալսումները շարունակական բնույթ են կրում, մեծ կարևորություն է դարձվում ինչպես նոր դասախոսների մոտ դասալսումներին, այնպես էլ փոխադարձ դասալսումներին: Դասալսումները ուսանողների մոտ բարձրացնում է պատասխանատվությունը ուսման հանդեպ: Դասալսումների ընթացքում արձանագրված խնդիրները քննարկվում և լուծվում են:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման հարցաթերթի վերլուծությունից արված եզրակացությունը հետևյալն է. քոլեջի

դասախոսական և ուսումնաօժադակ կազմը մշտապես մասնակցում է քոլեջում իրականացվող քննարկումներին, միջոցառումներին, որոշումներ կայացնելիս, խնդիրների պարզաբանմանը: Ուսումնառության ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 83.3%- ը մշտապես տարբերակներ է առաջարկում խնդիրների լուծման համար: 23.5% -ի առաջարկած տարբերակները միշտ հաշվի է առնվում, իսկ 55.8%-ը երբեմն է հաշվի առնվում: Դասախոսական կազմը քոլեջում առկա կարևոր խնդիրն է համարում անհարգելի ուշացումները և բացակայությունները, նշված խնդրի շտկման համար ձեռնարկվում է միջոցառումներ, ձեռնարկված միջոցառումները կիրականացվեն 2023 ուստարվա I կիսամյակից:

Քոլեջի դասախոսական կազմի 58.8% (20)-ը մեկ և ավելի անգամ մասնակցել է ՄԿԾ-ի մշակման, վերանայման և գնահատման գործընթացներին: Ընդ որում ՄԿԾ-ի մշակմանը մասնակցած դասախոսների 75% (15)-ը իրականցրել է հետազոտություն կապված ժամանակակից արտաքին միջավայրի փոփոխության հետ կամ իրականցրել է հետազոտություն հաշվի առնելով այլ ուս.հաստատության գործունեությունը և փորձը:

Հարցմանը մասնակցած դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 50%-ը ունի մասնագիտական վերապատրաստման կարիք, որից միայն 23.5% մասնակցել է մասնգիտական արտաքին վերապատրաստմանը: Դասախոսական կազմի 94.1% դրական է գնահատում քոլեջի կողմից իրականացվող ներքին վերապատրաստումները:

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջը շարունակում է ընդլայնել իր արտաքին գործընկերների շրջանակը, որոնց միջոցով բարձրանում է նաև քոլեջի ճանաչելիության մակարդակը:

Քոլեջի գրադարանային ֆոնդը համալրվում է հայալեզու, ժամանակակից և մասնագիտական գրականությամբ, ինչպես մկուզակի կողմից, այնպես էլ քոլեջի ֆինանսական միջոցների հաշվին:

Մկուզակի և ուսումնական մասի նախաձեռնությամբ վերանայվում և մշակվում են ուսումնական պլանները և մոդուլային ծրագրերը:

Քոլեջի տարբեր ստորաբաժանումների կողմից մշակվում են բարելավման ծրագրում նշված փաստաթղթերը (կարգեր, ընթացակարգեր): Ընթացիկ վերանայվում են նաև գործող կարգերը:

Կազմակերպված միջոցառումները կրում են ուսուցողական, հայրենասիրական և ճանաչողական բնույթ: Նման միջոցառումները ուսանողների մոտ սերմանում են մեծ սեր մշակույթի նկատմամբ: Կազմակերպված միջոցառումների նպատակն է որպեսզի ուսանողները ճանաչեն հայ ազգի մեծերին, գնահատեն նրանց կատարած ներդրումը հայ ազգի պատմության մեջ, պահեն և փոխանցեն նրանց թողած ժառանգությունը:

Կատարող՝ Ս. Եպիսկոպոսյան

Տնօրեն՝ Գ. Մեհրաբյան